

Համաձայն է  
«Տեխնիկական անվտանգության  
ազգային կենտրոնի  
տնօրեն  
Ա. Պետրոսյան

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՏԱՆԱԳՎՈՐ ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՅՏԱԹՅԵՐԻ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1214

Ք. Երևան

11.09.2009թ

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի, «ՌԱԿԵ» ՍՊԸ և «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 07.09.2009թ-ին կնքված N 1214 պայմանագրի՝ 07.09.2009թ-ից մինչև 11.09.2009թ-ը Լեռնամետալուրգիական և քիմիական օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության բաժնի գլխավոր փորձագետ Ա. Ղազարյանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեց « Դինո Գոլդ Սայնինգ Քամփնի » ՓԲԸ-ին պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Կապանի պղինձ-կոլչեղանային հանքավայրի «<Կենտրոնական>> հանք արտադրական վտանգավոր օբյեկտի կոնսերվացման նախագծային փաստաթղթերը:

Փորձաքննության արդյունքում պարզվեց, որ սույն նախագիծը կազմել է «ՌԱԿԵ» ՍՊ ընկերությունը «Դինո Գոլդ Սայնինգ Քամփնի» ՓԲԸ կողմից ներկայացված Կապանի պղինձ-կոլչեղանային հանքավայրի «<Կենտրոնական>> հանքի կոնսերվացման տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Կոնսերվացման նախագիծը կազմվել է համաձայն ՀՀ կառավարության 31.03.2005թ. № 485-Ն որոշմամբ հաստատված «Լեռնային փորվածքների լուծարման և գործունեության դադարեցման (կոնսերվացման) >> կարգի պահանջների:

Նախքան նախագծի կազմելը հատուկ ստեղծված հանձնախմբի կողմից իրականացվել են համայնքեր, որի ընթացքում ուսումնասիրվել է հանքի ներկայիս վիճակը, օդափոխության, ջրհեռացման համակարգերը, փորվածքներում տեղակայված լեռնահանքային մեքենաները, սարքերը և սարքավորումները:

Համաձայն ներկայացված նախագծի նախատեսվում է իրականացնել կոնսերվացման չոր տարբերակը: Միաժամանակ նախագծով նախատեսվում է կատարել մի շարք կանխավթարային աշխատանքներ, որոնցից են.

- որոշ հանքուղիներում, բովաքներում. փորվածքների խաչմերուկներում ամրակապերի վերականգնում կամ ամրակապում.
  - «<Կենտրոնական>> հանքը սնող ենթակայանի հոսանքազրկում և հանձնում տեղական էներգոցանցին.
  - №2, №3 և №9 հանքուղիների մուտքերի պարսպափակում պողպատե ճաղաշարով.
  - հանքափողի կոնսերվացում՝ հանահորի արգելափակում երեք մահճակներով և հանքահորերի հետ փորվածքների միացման հատվածների պարսպափակում:
  - հանույթային հանքախորշերի արգելապատում 0,4մ հաստության բետոնե պատով:
- Միաժամանակ նախագծով նախատեսվում է համայնքերի իրականացում, որի համար պետք է կազմվի ժամանակացույց: Նախագծով նախատեսված են նաև տեխնիկական անվտանգության միջոցառումներ համայնքերի ժամանակ, որոնցից են.
- համայնքերը կատարել միայն խմբով լեռնափրկարար ծառայության նեկայության պայմաններում.

- համայցերի ընթացքում իրականացնել կախված քարերի վնասազերծում, փորվածքներում օդի որակի ստուգում.

- արգելել փլզումների առկայության դեպքում համայցի շարունակելը տվյալ ուղղությամբ մինչև տեղամասի վերականգնումը.

- դադարեցնել համայցը հանքային օդի որակական ցուցանիշների անբավարարության դեպքում:

Նախագծով հաշվարկված են փորվածքների արգելափակման համար անհրաժեշտ նյութերը և տրված են դրանց իրագործման աշխատանքային նախագծերը:

Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը համապատասխանում են տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին:


Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված « Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի » ՓԲԸ-ին պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Կապանի պղինձ-կոլչեդանային հանքավայրի <<Կենտրոնական>> հանք արտադրական վտանգավոր օբյեկտի կոնսերվացման նախագծային փաստաթղթերի փորձաքննության եզրակացությունը

----- դրական է -----:

Փորձագիտական եզրակացությանը կցվող նյութերը՝

Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի պատճենը 43 էջ:

Փորձագիտական խմբի ղեկավար /փորձագետ/

 ----- Ա. Ղազարյան N 021  
ստորագրությունը, ազգանունը, վկայականի համարը